ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒՆԻՍԻ 2-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Երկրորդ Ծաղկազարդ։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը՝ օրվա տոնի նշանակության մասին։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, Հոգևոր Ճեմարանում տկսվեցին 1956—1957 ուսումնական տարվա ամավերջի բանավոր քննությունները։ Քննություններին ներկա եղան Վեհափառ Հայրապետը, բանաստեղծ Ա. Իսահակյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը և ամբողջ դասախոսական կազմը։

Քննությունները տևեցին մինչև հունիսի 15-ը, շաբաթ օր։

***

ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհարանում միաբանական լսարանում դասախոսեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը՝ Վեհափառ Հայրապետի Անգլիա կատարած ուղևորության առթիվ «Հայ և Անգլիական Եկեղեցիների հարաբերությունը» թեմայի շուրջ։

***

ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Հոգեգալուստ (Պենտեկոստե)։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։ Տոնի կապակցությամբ Մայր Աթոռ ոտքի էր եկել հավատացյալների խուռն բազմությունը։ Պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, քարոզեց հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը «Ձից և ամեկ Հոգւովդ քով Սրբով» բնաբանով։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն հունիսի 2-ին Կոստանդնուպոլսում վախճանված գերաշնորհ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Կարապետյանի հոգու փրկության համար։ Հանգուցյալ սրբազանի կյանքի և գործունեության մասին խոսեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը։

Սուրբ պատարագին և հոգեհանգստյան արարողության ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆԻՍԻ 12-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, հոգեշնորհ Տ. Մաշտոց ավագեպ Թաջիրյանը միաբանության համար Վեհարանում կարդաց երկրորդ դասախոսությունը «Վեհափառ Հայրապետը Մոսկվայում և Մոսկվայի հայ գաղութը» թեմայի շուրջ։

***

ՀՈՒՆԻՍԻ 16-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Սկիզբն Յարութեան կիւրակէից և յիշատակ Եղիայի մարգարէին»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Տ. Մկրտչյանը։ Այսօր Մայր Տաճարում իր անդրանիկ քարոզը խոսեց հոգեշնորհ Տ. Հոսիկ աբեղա Մանթուրյանը, ծանրանալով Եղիա մարգարեի կյանքի և նախանձահույզ գործունեության վրա։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց»։ Նախատոնակը և առավոտյան ժամերգությունը կատարվեց Ս. Հռիփսիմյանց վանքում։ Սուրբ կույսերի նահատակության տարեդարձի առթիվ Ս. Հռիփսիմեի տաճարում պատարագեց և քարոզեց վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Նահապետ վարդապետ Մուրադյանը։ Քարոզիչ հայր սուրբը վերհանեց սուրբ կույսերի նահատակության

գեղեցկությունը և մահվան դեմ խիզախելու քաջությունը՝ հանուն քրիստոնեական կրոնի վեհ իդեալների։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, առավոտյան ժամը 10-ին Հոգևոր Ճեմարանում, փոխ-տեսչի նախագահությամբ գումարվեց մանկավարժական խորհուրդ, որն ամփոփեց 1956—1957 ուսումնական տարվա կիսամյա և ամավերջի քննությանց արդյունքները։ Հետմիջօրեի ժամը 3-ին Վեհափառ Հայրապետի մոտ Վեհարանում տեղի ունեցավ մանկավարժական խորհրդակցություն՝ նվիրված 1957—1958 տարվա ուսումնա-դաստիարակչական աշխատանքներին։

Խորհրդակցությունում Վեհափառ Հայրապետը որպես մանկավարժ արեց մի շարք օգտակար և անհրաժեշտ դիտողություններ՝ Ճեմարանում աշխատանքը է՛լ ավելի կազմակերպված անցկացնելու և արդյունավետ դարձնելու համար։

Խորհրդակցության վերջում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց հայտնել Իր օրհնությունն ու գոհունակությունը տեսչության և դասախոսական կազմին՝ Ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներում ձեռք բերված գոհացուցիչ արդյունքների համար։

Ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իրեն սեղանակից դարձնել Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմին։

***

ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «Տօն սրբոց կուսանացն Գայիանեանց»։ Ս. Գայանեի վանքում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը՝ օրվա տոնի նշանակության և բարեպաշտ հայ կնոջ՝ կյանքում կատարած մեծ դերի մասին։

***

ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Յովհաննու Կարապետի և Աթանագինեայ եպիսկոպոսի» տոնի առթիվ Ս. Շողակաթի վանքում պատարագեց և տոնախմբվող սրբերի մասին քարոզեց հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ ելիցն ի վիրապէն»։ Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը։ Առավոտյան ժամերգությունից հետո Վեհափառ Հայրապետի հրամանով և Սահակ արքեպիսկոպոսի շնորհաբաշխությամբ դպրության չորս աստիճաններ ստացան Հոգևոր Ճեմարանի դասարանական բաժնի 11 շրջանավարտները՝ Ցոլակ Աղաջանյան, Իշխան Մելքոնյան, Խորեն Մելքանեջյան, Վլադիմիր Կերոյան, Հակոբ Ջենեզյան, Հակոբ Ջաքարյան, Գասպար Կակոյան, Գրիգոր Նևրովզյան, Ցիրիլ Փիլիպոսյան, Վարուժան Առաքելյան և Աբրահամ Մարգարյան։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Բարեկենդան Ս. Գրիգոր Լուսաւորչի պահոց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հանդիսավոր հոգեհանգստյան պաշտոն՝ բարձրաշնորհ Տ. Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյանի և Մայր Աթոռի բարերար նորոգ հանգուցյալ Ներսես Կյուլպենկյանի հոգիների փրկության համար։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հարավսլավյան երիտասարդական միությունների պատվիրակությունը։ Հյուրերը եղան Մայր Տաճարում և թանգարանում։

***

ՀՈՒՆԻՍԻ 6-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց ՍՍՌՄ Ճարտարապետների միության պատասխանատու քարտուղար Աբրոսիմովը, որին ընկերակցում էին Մոսկվայի և Երևանի մի խումբ ճարտարապետներ՝ Միխայլովը, Խոջաևը, Մազամանյանը, Աղաբաբյանը և ուրիշներ։ Այցելությունները հանգամանորեն ծանոթացան Մայր Տաճարի ճարտարապետական առանձնահատկություններին և պատմությանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց հունգարական լրագրողների պատվիրակությունը, գլխավորու-

ՀԱՅԿ ԳԵՂԱՐՔԵԱՆ ՄԱՍՆ ՄԱՍԵՆՏԻԼ ԳՐԱԴԱՐԱՆ

թյամբ «Նեպսաբաղշաղ» թերթի գլխավոր խմբագիր Դեժե Նեմեշու։ Պատվիրակության կազմի մեջ մտնում էին «Նեպսաբաղշաղ» թերթի խմբագրական կազմի անդամ Կարոլ Սամոշին, Հունգարական ռադիոյի նախագահի տեղակալ Դյուլա Շիմոն, «Լուդաշ Մարի» ամսագրի պատասխանատու խմբագիր Դիերդ Ֆելդեշը, «Նեպակարատ» թերթի գլխավոր խմբագիր Իշտվան Վարկոնին, հրապարակախոս Միխայ Անդրաշ Ռոնային, Դիեր-Շոպրոնի մարզի «Կիշալֆելդ» թերթի գլխավոր խմբագիր Շանդոր Լոյային, «Ասբաղֆելդ» գյուղացիական շաբաթաթերթի խմբագրի տեղակալ Դյուլա Էկը, Հունգարիայի հեռագրական գործակալության և ռադիոյի Մոսկվայի մշտական թղթակիցներ Զաբա Կիշը և Իշտվան Կուլշարը, «Գանց ույշաղ» գործարանային թերթի խմբագիր Դիերդ Էրդեին, Հունգարիայի Սոցիալիստական բանվորական պարտիայի կենտկոմի մամուլի բաժնի վարիչ Բելա Սաքոն։

Վերջում հյուրերին ընդունեց Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի մի խումբ գրողներ՝ արձակագիր, բանաստեղծ և մանկական գրող, Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի գրողների միության քարտուղար Մաքս Կիմերինգը (պատվիրակության ղեկավար), բանաստեղծ, պետական մրցանակի լաուրեատ, «Թովանդակություն և ձև» ամսագրի գլխավոր խմբագիր Պետեր Հուխելը, արձակագիր Վոլֆգանգ Յոհոն, գրականագետ Էդուարդ Ցակը, ռուս գրականության թարգմանիչ Մոնիկա Հուխելը, քննադատուհի Քրիստա Վոլֆը և ակնարկագիր Հելմուտ Հատպտմանը։

Մայր Տաճարը և եկեղեցական հնագիտական թանգարանը դիտելուց հետո հյուրերն արժանացան Վեհափառ Հայրապետի ընդունելության։

***

ՀՈՒՆԻՍԻ 19-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Բիլմայի պատգամավորության պատվիրակությունը, որի կազմումն էին Աղվանքյանների պալատի սպիկերի տեղակալ Տակին Թեյն Մաունգը (պատվիրակության ղեկավար), Սաո Կուն Ին, Սո Լու Լուն, Դուվա Լովանլին, Ու Թա Դոնը, Ու Մաունգը։ Պատվիրակության հետ էին նաև ՍՍՌՄ-ում Բիրմական Միության արտակարգ ու լիազոր դեսպանի կինը՝ տիկին Զինը, ՍՍՌՄ Գերագույն Սովետի դեպուտատ Պ. Ի. Մորոզովը, ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության պատասխանատու աշխատակիցներ։

Մայր Աթոռում ուղղության խոսքով հյուրերին դիմեց Մայր Տաճարի ավագ լուսարար Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, որից հետո արքեպիսկոպոսը հյուրերին բացատրեց Տաճարի ճարտարապետական կառուցվածքը և ծանոթություններ տվեց Մայր Աթոռի ներքին կյանքի մասին։

Աղվանքյանների պալատի սպիկերի տեղակալ Տակին Թեյն Մաունգը իր և պատվիրակության անդամների անունից խորին շնորհակալություն հայտնեց ջերմագին ընդունելության համար։ Հյուրերը Մայր Աթոռից մեկնեցին լավագույն տպավորություններով։

***

ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Չեխոսլովակյան Ռեսպուբլիկայի կերպարվեստի աշխատողների պատվիրակությունը «Վեստնիկ ուսինի» ամսագրի գլխավոր խմբագիր Դուշան Շինդելարժի գլխավորությամբ։ Հյուրերը դիտեցին Մայր Տաճարը և եկեղեցահնագիտական թանգարանը, որտեղ նրանց առաջնորդում և բացատրություններ էին տալիս դերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը և թանգարանի վարիչ հոդեշնորհ Տ. Հուսիկ աբեղան։

***

ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, հետմիջօրեի ժամը 3-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ղարաբաղի 70 հայ ուսուցիչներից բաղկացած խումբը։ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել ուսուցիչներին և շուրջ մեկ ժամ տևող սիրալիր տեսակցության ընթացքում հետաքրքրվեց Ղարաբաղում հայ դպրոցների և ուսուցիչների վիճակով։